Հավելված N 2
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ» ՄԵԴԱԼԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Համագործակցություն հանուն փրկության» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է փրկարարական ծառայողներին, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց՝ արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, ինչպես նաև փրկարարական աշխատանքների ընթացքում ցուցաբերած արիության, խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար:

2. «Համագործակցություն հանուն փրկության» մեդալը շնորհում է Նախարարը և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը:

3. «Համագործակցություն հանուն փրկության» մեդալը բաղկացած է երկու մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը դարձերեսի կողմից ունի հատուկ ասեղային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24: Կախիչը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող դարչնագույն մետաքսյա ժապավենով: Ժապավենի եզրերը եզերված են 2 մմ լայնություն ունեցող մոխրագույն շերտագծով: Կախիչի ներսի կողմի եզրային հատվածից՝ 4 մմ հեռավորության վրա, վերից վար ձգվում են 6 մմ լայնությամբ մեկական կապույտ զոլակներ: Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշմման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում

900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 2.5մմ (շեղում՝ +/- 0.2մմ):

4. «Համագործակցություն հանուն փրկության» մեդալը իրենից ներկայացնում է ոսկեգույն շրջանակ՝ երկու կողմից եզրագծված ոսկեգույն դափնու տերևներով: Կենտրոնում ութաթև աստղ է, աստղի կենտրոնում երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով:

5. «Համագործակցություն հանուն փրկության» մեդալի ութաթև աստղի վերին մասում գրված է «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևի մասում՝ «ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ» բառերը: Մեդալի դարձերեսին հորիզոնական 3 տողերով գրված են «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը:

6. «Համագործակցություն հանուն փրկության» մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Համագործակցություն հանուն փրկության» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ